ՀՀ էկոնոմիկայի նախարարին՝
Պարոն **Գևորգ Պապոյանին**
կից հասարակական խորհրդի
նախագահին

ԴԻՄՈՒՄ

Հարգելի պարոն Պապոյան,

Ես՝ **Հասմիկ Բարխուդարյանս**, «**Արիես Քեյթրինգ Սերվիս**» (ՀՎՀՀ 00079228) և «**Արիես Լանչ**» (ՀՎՀՀ 00093371) ընկերությունների հիմնադիրն եմ: Մոտ երեք տասնամյակ շարունակ գործունեություն եմ ծավալում հանրային սննդի ոլորտում, ինչպես նաև ներգրավվելով ոլորտի համակարգային բարեփոխումների և որակի բարձրացման նախաձեռնություններում:

Վերջերս ընտրվել եմ «**Ռեստորանատերերի շահերի և իրավունքների պաշտպանության միություն**» (ՀՎՀՀ 08309292) հասարակական կազմակերպության **Նախագահ**, որի նպատակն է ապահովել ռեստորանատերերի շահերի պաշտպանությունը, ոլորտի մրցակցային զարգացմանը նպաստելը և պետություն-բիզնես համագործակցության արդյունավետ մոդել ձևավորելը:

Հաշվի առնելով իմ երկարամյա մասնագիտական փորձը և ոլորտային ներգրավվածությունը՝ հայտնում եմ պատրաստակամությունս մասնակցելու ՀՀ էկոնոմիկայի նախարարին կից հասարակական խորհրդի աշխատանքներին՝ որպես հանրային սննդի և սպասարկման ոլորտի քաղաքացիական հասարակության ֆիզիկական ներկայացուցիչ: Համոզված եմ, որ կկարողանամ իմ ներդրումն ունենալ ոլորտային քաղաքականությունների ձևավորման և մասնակցային կառավարման զարգացման գործում:

Իմ մասնագիտական գործունեության ընթացքում մշտապես եղել եմ ոլորտում ակտիվ և ներգրավված անձ: Եղել եմ **ՓՄՁ խորհրդի անդամ**, ինչպես նաև **«Մադամ Ակումբի» խորհրդի անդամ**: Տարիների ընթացքում ունեցել եմ բազմաթիվ հանդիպումներ և քննարկումներ տարբեր պետական ինստիտուտների հետ՝ կապված **զնումների ընթացակարգերի, հարկային քաղաքականության, ոլորտային բարեփոխումների և պետություն–մասնավոր հատված համագործակցության** ուղղություններով:

Ներկայումս ակտիվորեն համագործակցում եմ **Երևանի քաղաքապետարանի** հետ՝ նպաստելով հանրային սննդի ոլորտում կանոնակարգումների կատարելագործմանը և գործարար միջավայրի բարելավմանը:

Խնդրում եմ դիտարկել իմ թեկնածությունը հասարակական խորհրդի կազմում ընդգրկվելու նպատակով:

Հարգանքով՝
Հասմիկ Բարխուդարյան

«Արիես Քեյթրինգ Սերվիս» ՍՊԸ
«Արիես Լանչ» ՍՊԸ
Հիմնադիր
«Ռեստորանատերերի շահերի
և իրավունքների պաշտպանության միություն» ՀԿ
Նախագահ

Հաշվառման հասցե՝ ք. Երևան, Արաբկիր ՎՏ, Հրաչյա Քոչարի 9, բն. 4
Հեռ.՝ +37455227689
Էլ. փոստ՝ Hasmik.mikhailovna@gmail.com

Կից ներկայացվում են՝

1. Ընկերությունների պետական գրանցման վկայականի կամ ռեգիստրի քաղվածքի պատճեն
2. Կանոնադրությունների պատճեն
3. Անձնագրիս պատճեն և հաշվառման հասցեն
4. Կոնտակտային տվյալներ